

ԱՅԴՊԻՍԻ ԵԿԵՂԵՑԻ ՄԵԶ ՊԵՏՔ ՉԻ

Posted on June 11, 2011 by Keghart



Category: [Opinions](#)



Արթուր Ավթանդիյան, Lragir.am, 19 Մայիս 2011 Չրույց ՀՀ նախկին վարչապետ Հրանտ Բազրատյանի հետ



- Ո՞րն է եղել եկեղեցու դերը Հայաստանի տնտեսական պատմության մեջ:

- Սկսենք նրանից, որ ամենամեծ վեճը Լուսավորչի տոհմի և Արշակունիների միջև, երբ Հայաստանը դարձավ քրիստոնեական երկիր, անմիջապես դարձավ հողային հարց: Ի տարբերություն մյուս քրիստոնեական եկեղեցիների՝ հայկական եկեղեցին ի սկզբանե հսկայական բաժին է ունեցել հարկերի մեջ՝ մեկ յոթերորդը, տասանորդը: Տնտեսագետ Թադևոս Ավդալբեգյանը հետաքրքիր տվյալներ է բերում այս մասին: Որոշակի հետազոտություններ տեսնում ենք նաև Մանանդյանի մոտ: Մեզ է հասել նաև Պապ թագավորի մասին պատմությունը՝ շարադրված Ագաթանգեղոսի կողմից, որտեղ ակնհայտ է կոնֆլիկտը Պապի և եկեղեցու միջև:

Արթուր Ավթանդիյան, Lragir.am, 19 Մայիս 2011 Չրույց ՀՀ նախկին վարչապետ Հրանտ Բազրատյանի հետ



- Ո՞րն է եղել եկեղեցու դերը Հայաստանի տնտեսական պատմության մեջ:

- Սկսենք նրանից, որ ամենամեծ վեճը Լուսավորչի տոհմի և Արշակունիների միջև, երբ Հայաստանը դարձավ քրիստոնեական երկիր, անմիջապես դարձավ հողային հարց: Ի տարբերություն մյուս քրիստոնեական եկեղեցիների՝ հայկական եկեղեցին ի սկզբանե հսկայական բաժին է ունեցել հարկերի մեջ՝ մեկ յոթերորդը, տասանորդը: Տնտեսագետ Թադևոս Ավդալբեգյանը հետաքրքիր տվյալներ է բերում այս մասին: Որոշակի հետազոտություններ տեսնում ենք նաև Մանանդյանի մոտ: Մեզ է հասել նաև Պապ թագավորի մասին պատմությունը՝ շարադրված Ագաթանգեղոսի կողմից, որտեղ ակնհայտ է կոնֆլիկտը Պապի և եկեղեցու միջև:

Պապ թագավորը եկեղեցուն պարզապես հասկացնել է տալիս՝ Ինչքան մենք շատ ձեզ հարկ տանք, այնքան պետք է պետական բյուջե քիչ հարկ մտնի: Դուք վերցնում եք հարկերը և փչացնում եք փողերը, այսպես ասած՝ ոչ պետական կամ անարտադրական կարիքների վրա եք ծախսում, մինչդեռ մեզ պետք է բանակ: Ինչպես գիտենք, ամենայն հավանականությամբ, հենց մեր եկեղեցականների դավադրության շնորհիվ Պապ թագավորը սպանվում է:

Եվ եթե մենք դիտարկում ենք ընդհանրապես Լուսավորչի տոհմը, ապա միանշանակ չի, որ նրան կարելի է դրական գնահատական տալ: Ի վերջո, հինգերորդ դարի սկզբին, մանավանդ երբ մենք գրերը ստեղծեցինք, եկեղեցու դիրքերը շատ ուժեղացան: Մեզ դեռ հարյուրամյակներ էին պետք գրերը պետական կյանք ներմուծելու համար, սակայն եկեղեցական կյանք նրանք անմիջապես ներմուծեցին:

Եվ եկեղեցին շատ հզոր գործիք ստացավ մոբիլիզացիայի համար: Տարօրինակ է, սակայն հենց այդ պատճառով եկեղեցին շուտով պետք է դներ պետության գոյության

հարցը: Եթե ես ամենից լավ եմ անում իմ գործը՝ դպրոցներ, գրագրություն, արտաքին քաղաքականություն, ինչո՞ւ պետք է թագավորին հանդուրժեմ: Ես չունեմ տվյալներ եկեղեցու տնտեսական հզորության մասին, բայց ես ունեմ որակական փաստեր ասելու, որ երբ հայ եկեղեցին ուժեղանում է, ապա գալիս է մի պահ, որ հետագա հզորացումը հնարավոր է միայն պետության հաշվին: Իսկ երբ պետությունը թուլանում է, ապա այն դադարում է գոյություն ունենալ: Եվ դա միշտ ձեռնտու է եկեղեցուն:

Ամենայն հավանականությամբ, երբ արաբները յոթերորդ դարում մուտք գործեցին Հայաստան, ապա նրանց շնորհիվ էր, որ մենք՝ որպես ազգ, վերածնվելու հնարավորություն ստացանք: Մենք պատմության էջերից անհետացող ազգ էինք: Ի՞նչ արեցին արաբները: Նրանք կտրուկ սահմանափակեցին, իսկ շատ տեղերում մասսայաբար վերացրեցին եկեղեցուն տրվող հարկը և իրենք Արաբական պետության հանդեպ դրեցին դրամական հարկ:

Դա խրախուսեց ապրանքադրամային հարաբերությունները: Մեր նախարարներն ու եկեղեցին ստիպված հողը վարձակալությամբ էին տալիս գյուղացուն: Սա մի բան էր, որ Եվրոպայում տեղի է ունեցել ուղիղ հազար տարի հետո: Մանր գյուղացիական տնտեսությունների ստեղծումն առաջացրեց կենտրոնամետ տրամադրություններ, որոնք էլ ձևավորեցին պետության պահանջ: Ստեղծվեց Բագրատունիների պետությունը, որը հիմարաբար հողը նորից պետականացրեց՝ իր իսկ քայքայման հիմքը դնելով: Նկատի ունեցե՞ք՝ Բագրատունիների պետությունը չի քայքայվել արտաքին թշնամիների հարձակման հետևանքով:

Մենք նույնիսկ պատմությունն ենք սխալ շարադրում: Այն ժամանակ՝ իններորդ-տասներորդ դարերում, նույնպես առաջանում են օլիգարխներ. մոդա է դառնում ունենալ սեփական եկեղեցի, մի-մի տաճար կառուցել, ունենալ պանդոկներ և գյուղեր և այլն: Եվ ահա դրանցից ամենահարուստը դառնում է Պետրոս Գետադարձ կաթողիկոսը: Հստակ տվյալներ կան, որ նրան էին պատկանում 1022 գյուղ: Ամենայն հավանականությամբ, սա կազմում է այն ժամանակվա Հայոց աշխարհի գյուղերի մինչև 20%-ը: Պատահական չէ, որ 1045թ.-ին եկեղեցին համոզում էր Գագիկ Երկրորդին գնալ Բյուզանդիա, իսկ այնպիսի զորավար, ինչպիսին Վահրամ Պահլավունին էր, որին ցանկացած բանակ պատրաստ էր սպարապետ վերցնելու, ոռնում էր նրանից, որ չի կարողանում զինվորներին աշխատավարձ վճարել: Պատճառները մի քանիսն էին՝ տնտեսական ճգնաժամ, հողի պետական սեփականությունը և իհարկե, ամենախոշոր պատճառը՝ եկեղեցին: Ինձ համար միանշանակ է՝ ինչքան եկեղեցին տնտեսապես ուժեղ է լինում, այնքան նա դուրս է գալիս իր գործառույթներից, նրա դրական դերը դադարում է և նա սկսում է քայքայել պետությունը: Շատ հետաքրքիր բան է տեղի ունենում հետագայում: Երբ քայքայվեց Բագրատունիների թագավորությունը, հայերը Կիլիկիայում թագավորություն ստեղծեցին, որը հիմնված էր հողի մասնավոր սեփականության վրա: Մի պահ Կիլիկիան նույնիսկ կաթոլիկություն ընդունեց: Այն

պահից սկսած, երբ այնտեղ եկեղեցին նորից սկսեց սեփականություն կունտակել, պետությունն աստիճանաբար թուլացավ և 1375թ.-ին դադարեց գոյություն ունենալ: Փորձը ցույց է տալիս, երբ պետության մեջ գերակշռել է մանր սեփականատերը՝ գյուղացին, մենք անհաղթելի ենք դարձել: 1991թ.-ին էլ մենք հաղթեցինք պատերազմում, որովհետև մեր հետ կռվողները հողատերեր էին: Երբ մթա երրորդ դարում մակեդոնական բանակն առաջին անգամ պարտվեց հռոմեականին, Մակեդոնիայի Պյունոնոս թագավորի հարցին՝ թե ինչպես դա կարող էր հնարավոր լինել, պատասխանեցին՝ մեր դեմ կռվում են լեգիոներները, որոնք բոլորը հեծյալներ են ու ունեն հողեր: Ի՞նչ է տեղի ունենում հայ իրականության մեջ Բագրատունիներից հետո: Եկեղեցին դառնում է ամենաթող: Եվ եթե դիտարկում ենք 14-16 դարերը, նրանք մի տեսակ մուկ դարեր են: Կարծես թե Հայկական լեռնաշխարհում հայություն քիչ կա, բայց արի ու տես, որ 11-13դդ կառուցվել են քրիստոնեական հիմնական եկեղեցիները: Պատկերացրեք՝ ինչքան հարուստ է եղել եկեղեցին:

Շատ հետաքրքիր է, որ երբ Վահրամ Պահլավունին իր ամբողջ զինուժով քաշվեց-գնաց Վրաստան, որը հիմք ծառայեց Թամար թագուհու ու Դավիթ Շինարարի համար (ի դեպ, դա վրացական պետության միակ լուսավոր էջերն են), Հայաստանում զինուժ չմնաց, որովհետև եկեղեցու շրջանակներում զինուժ չի դաստիարակվում: Որովհետև եկեղեցուն չի կարելի առողջապահություն և դպրություն տալ: Այո՛, եկեղեցին կարող է երեխաներին գրագիտություն սովորեցնել, բայց դա դեռ քիչ է գիտելիք ստանալու համար այն աստիճանի, որ պետության միջին քաղաքացին կոնկուրենտ լինի ապագա արհավիրքներին՝ հանձին մոնղոլների և օսմանցիների, դիմագրավելու համար: 16-18դդ-ում մենք չենք տեսնում ոչ մի հայկական իշխան. հայկական իշխանական տները վերացել են:

Թագավորության վերանալուց հետո եկեղեցին խլեց այդ հողերը, հետո ստիպված եղավ դրանց մի մասը զիջել քուրդ բեգերին ու թուրք աղաներին, որոնք, ի դեպ, տնտեսական իրավունքի առումով, շատ ավելի պրոգրեսիվ տարր էին, քան առաքելական եկեղեցին, քանի որ նրանք էլ արաբների պես սկսեցին հողը վարձով տալ հայ գյուղացուն: Դրա շնորհիվ 17-18դդ-ում նորից հայկական վիլայեթներում հայերի տեսակարար կշիռը շատ ցածր տոկոսից բարձրանում է 30-45%՝ առիթ տալով Հայկական հարցին: Իսկ ի՞նչ ենք մենք տեսնում հայոց կաթողիկոսների մեջ: Մենք ունեցել ենք 132 կաթողիկոս, որոնց գրեթե բոլորի գերեզմանները և ծննդյան ու մահվան տարեթվերը մենք գիտենք: Առ այսօր մի թագավորի գերեզման չի պահպանվել: Եվ պարսկական ու թուրքական ռեժիմի ժամանակ գրեթե բոլոր կաթողիկոսները մի քանի անգամ արժանացել են ամենաբարձր պետական շքանշանների:

- Եթե մի փոքր մասնավորեցնենք, օտարերկրյա իշխանություններն ինչպիսի՞ տնտեսական հարաբերություններ են ունեցել եկեղեցու հետ:

- Օրինակ՝ մենք ունենք Ավդալբեգյանի տվյալները՝ հասած մեզ 16-17դդ-ից, ըստ որոնց՝

Երևանի նահանգում եկեղեցու ունեցած հողերն ավելին էին, քան պարսկական հողերը: Այսինքն՝ դարերի ընթացքում և՛ թուրքերը, և՛ պարսիկները հասկացել էին՝ Տվեք հողերը եկեղեցուն, և ոչ մի տնտեսական առաջընթաց չի լինի: Իսկ առանց վերջինի՝ պետության պահանջ չի ստեղծվում: Եվ 11-18դդ-ում՝ մինչև ռուսների գալը, մենք մոտ 800 տարի հյուսիսահարավ ապրել ենք պարսիկների և թուրքերի գերիշխանության ներքո: Թուրքերի ու պարսիկների առաջին օգնականը Հայ առաքելական եկեղեցին էր: Բեգերն ու աղաները նեղվում էին, երբ հերթական հողակտորը տրվում էր եկեղեցուն, բայց նույնիսկ թուրքերն էին հասկանում, որ աղայի կամ բեգի իշխանության տակ գտնվող գյուղացին շատ ավելի ազատամիտ է, քան եկեղեցուն պատկանող գյուղացին:

Անշուշտ մենք ունեցել ենք պրոգրեսիվ հայ կաթողիկոսներ՝ Եսայի Հասան-Ջալալյան, Խրիմյան Հայրիկ և այլն, որոնց մեջ կոնստրուկտիվ առումով հայրենասիրությունն է խոսել: Բայց 99%-ով եկեղեցին նպաստել է օտարի լծի հարատևմանը, քանի որ նա խոշոր սեփականատեր էր, իսկ օտար պետությունը միշտ պատրաստ էր նրան ավելի մեծ բաժին տալ, քան հայկական պետությունը:

Հայ եկեղեցին միշտ հասկացել ու խուսափել է հայկական պետության վերականգնումից: Պատահական չի, որ 1836թ. «Պոլոժենիեի» միջոցով ցարիզմը դրեց դպրոցական ռեֆորմների հարցը: Դրանից 70 տարի հետո ցարական կառավարությունը գործողություններ ձեռնարկեց: Մենք դրա դեմ ընդվզեցինք, բայց ցարը մի հարցում ճիշտ էր: Այո՛, նրան չհաջողվեց իր խնդիրը լուծել, բայց գոնե զսպեց ու հայկական հասարակությանը հասկացրեց, որ Հայ առաքելական եկեղեցին իր կրոնական խնդիրներից դուրս՝ չարիք է հայ ժողովրդի համար: Կրկնում եմ, իր կրոնական խնդիրներից դուրս: Մենք միանշանակորեն դպրոցական դասագրքերում խարազանում ենք այդ ռեֆորմը՝ ասելով, որ այն ուղղված էր հայկական դպրոցների դեմ և այլն: Բայց, մի կողմ թողնելով ցարական երկերեսանիությունը, գուցե կար դպրոցների աշխարհիկացման հիմնախնդիր:

-Որո՞նք են այսօր եկեղեցու տնտեսական շահերը:

- Դրանք շատ բնական են. եկեղեցին ուզում է փող աշխատել: Հայ առաքելական եկեղեցին այսօր չի ցանկանում ծառայել աստծուն: Դուք տեսե՞լ եք, որ մարդիկ դրամարկղում գումար մուծեն, ՀԴՄ կտրոն ստանան և պսակադրություն անեն: Որևէ տեղ տեսե՞լ եք հաշվետվություն՝ քանի մոմ է վաճառվել և ինչ գնով: Ես երեք տարի եղել եմ վարչապետ, և իրոք եկեղեցին երբեմն խնդրանքով դիմում էր մեզ, ու մենք հողահատկացում էինք կատարում եկեղեցի կառուցելու համար: Պետությունը պետք է օգնի, քանի դեռ եկեղեցու նպատակը մնում է կրոնի շրջանակներում: Սակայն եղել է նաև, որ ինձ հոգևորականներ են դիմել (անունները չեմ ուզում տալ) հարսանյաց սրահ կամ խանութ սեփականաշնորհելու խնդրանքով: Ես բոլոր այդ խնդրանքները մերժել եմ: Բնականաբար, նման կարգի պետական գործիչները եկեղեցու դուրը չեն գալիս:

Վերցրեք այսօրվա վարչապետին: Ամբողջ օրը պտտվում է ու ասում՝ Ուրիշ էլ ի՞նչ անեմ: Ինչո՞ւ պետք է մեռելոցի օրը՝ ապրիլի 25-ին չգնանք աշխատանքի: Մենք արդեն եկեղեցական տոները դարձնում ենք պետական տոներ: Բերեմ մի օրինակ: Շվեդիայի պատմության մեջ ուղիղ երեք անգամ եկեղեցին՝ ստանալով հողեր ու արտոնություններ, հանկարծ դառնում է ամենախոշորը: Շվեդական պետությունը հասկանում է, որ այդպես ինքը կկործանվի, ու երեք անգամ ունեզրկում, հողաթափում է եկեղեցուն:

Եկեղեցին բոլոր ժամանակներում եղել է ամենաանհաջող տնտեսական կառավարիչը: Ինչո՞ւ Իսպանիան հետ ընկավ: Նախ, որովհետև Ամերիկայից բերված ոսկին չստերիլիզացվեց, և ապա, ինկվիզիցիայի պատճառով եկեղեցականները հսկայական հողեր գրավեցին: Իսպանական կաթոլիկ եկեղեցուն հողերում դրամական հարաբերություններ չէին գործում, և Իսպանիան, որտեղ տնտեսական արտադրողականությունը 14-15դդ-ում մի քանի անգամ ավելի բարձր էր, քան Անգլիայում, արագորեն սկսեց զիջել նրան: Մի Իգնատիոս Լոյոլա 300-400 տարի հետ գցեց Իսպանիան: Այսօր մոտավորապես նույնն է անում Հայ առաքելական եկեղեցին:

Ներկայիս կաթողիկոսն Էականորեն շահագրգռված է տնտեսական գործարքների մեջ: Գործարան գործարանի հետևից, տարածք տարածքի հետևից: Հասարակ բան, Երևանի կենտրոնում քանդվում է ակադեմիկոս Օրբելու շենքը և տրվում կաթողիկոսին՝ այնտեղ նստավայր կառուցելու համար: Կաթողիկոսն ունի նստավայր Էջմիածնում և Բյուրականում, էլ ի՞նչ եք ուզում: Ինչո՞ւ եք մոտավորապես 1000մ2 գիտական օջախը քանդում: Մի՞թե Օրբելին և նրա հիշատակը մի հատ կաթողիկոս չարժեն մեզ համար: Վերջապես ինչո՞ւ եք մի քանի տասնյակ միլիոն արժողությամբ շինությունը քանդում և փոխարենը անում նույնարժեք աննպատակ ներդրում: Պատասխանը կարող է լինել՝ Եկեղեցին է փողը տալիս, բայց միևնույնն է, եկեղեցուն փողն էլ հանրային ռեսուրս է, չէ՞: Դա որևէ քննադատության չի դիմանում:

- Մենք սովորաբար օգտագործում ենք «ազգային եկեղեցի» բառակապակցությունը և նույնիսկ կաթողիկոսը մի առիթով նշեց, որ միայն մեռնով օծվածն է հայը: Ըստ ձեզ՝ այդ «ազգայինը» պետակա՞ն հասկացությունն է, թե՞ Էթնիկ:

- Ես դա չեմ կարողանում հասկանալ: Ժամանակին ինչո՞ւ է ստեղծվել քրիստոնեությունը: Կամ պետք է Հռոմեական կայսրությունը հարատևեր, որովհետև ինքը տարածաշրջանի միակ իշխանությունն էր, կամ պետք է այդ ինտեգրացիան փոխարինվեր կրոնով: Ի սկզբանե, քրիստոնեությունը ստեղծվել է վերազգային նպատակներով: Աշխարհում այսօր կա 1300 ազգ և ազգություն, որոնց ավելի քան կեսը քրիստոնեություն են դավանում: Ճիշտ է, քրիստոնյաների տեսակարար կշիռն իջնում է, սակայն նրանք դեռ մուսուլմաններից ավելի շատ են: Այսինքն՝ ստեղծվեց մի կրոն, որն ընդունելի էր բոլորի համար:

Հեթանոսական ժամանակաշրջանում ամեն ազգ էր կրոնն ուներ, և այս դեպքում խաղաղություն հաստատելու համար ուժ էր պետք: Քրիստոնեությունը ստեղծվեց որպես պահանջվող ուժին այլընտրանք: Հիմա հայերը այնքան են լկտիանում, որ ասում են՝ մենք հիմնել ենք մեր ազգային եկեղեցին: Սա աշխարհին նետված մարտահրավեր էր: Օտարազգի բոլոր նորմալ աստվածաբանները, որոնք հարկ են համարել ժամանակ հատկացնել սրան, որակել են այն որպես լկտիություն:

Մենք երբեմն մեջբերում ենք ինչ-որ մարդկանց հիացմունքի խոսքեր՝ չասելով, որ դատապարտող խոսքերը տասնապատիկ շատ են: Քրիստոնեությունն իրավունք չունի ազգային լինել: Քրիստոնեությունը 10-րդ դարում կիսվեց և հիմա ներկայացված է երեք խոշոր կոնֆեսիաներով: Հայերի լկտիությունն այնքան հերիքեց, որ այդ երեքից ոչ մեկին չմիացան: Եվ սրա հիմքում փոքրիկ մաֆիան է, որը կոչվում է Հայ եկեղեցու կառավարում: Եվ այդ ֆրազով, որը դուք նշեցիք, եկեղեցին փորձում է խաբել, մոլորեցնել հավատացյալներին: Եկեղեցին միշտ դիմում է պետության օգնությանը, որպեսզի իր իշխանությունը վերահաստատի:

Օրինակ՝ 2005թ. Սահմանադրության փոփոխությունները: Հայ առաքելական եկեղեցին միշտ փորձել է օգտվել պետական ռեպրեսիվ մեխանիզմներից իր մրցակիցների դեմ պայքարելու համար:

- Կա արդյո՞ք Հայ առաքելական եկեղեցու համար պետության տեսլական:

- Մեր պատմության առավել մեծ շրջանի համար՝ չկա և չի եղել: Ընդամենը մի քանի տասնամյակ է որ մեր եկեղեցին, շնորհիվ խոհեմ այրերի ակտիվորեն օժանդակել պետության կայացմանը՝ Հայ առաքելական եկեղեցին ավելի շատ հաճույքով զիջել է պետությունը: Պատմականորեն դա կատարվել է 2-3 անգամ: Մեկը՝ 428թ.-ին, մյուսը՝ 1045թ.-ին: Նա միշտ էլ մեծ հաշվով հանձնելու է պետությունը: Որովհետև եթե հայ ժողովուրդը չունի պետություն, բնական է՝ նա պետք է ապավինի եկեղեցուն: Անշուշտ սա այն դեպքում, երբ օտարի լուծը պատրաստ չէ նույն այդ եկեղեցուն էլ ոչնչացնել:

Եկեղեցին, գտնվելով օտարի լծի տակ, ավելի մեծ եկամուտներ ստանալու հնարավորություն է ունենում՝ մեծացնելով իր իշխանությունն ու ազդեցությունը: Կրկին ընդգծեմ, եկեղեցին շատ հաճախ մեր հետ մաքառել է օտարի լծի դեմ. պայքարող բազմաթիվ հասարակ վանականներ, նույնիսկ կաթողիկոսներ ունենք, բայց ես խոսում եմ երևույթի մասին՝ երկարատև ժամանակով և մեծ թվով իրադարձությունների նկատմամբ: Ուրիշ հարց է, երբ եկեղեցին իր ֆունկցիայի մեջ է և տնտեսական գործառույթներ չունի և զբաղվում է զուտ եկեղեցական գործերով: Այդ եկեղեցին անպայման դառնում է պետության և հասարակության բարեկամը:

- Իսկ հայկական Էթնոգենեզի ընթացքում ի՞նչ դերակատարություն է ունեցել եկեղեցին:

- Ինձ հայտնի չի որևէ փաստ, որը վկայում է եկեղեցու ազգաստեղծ գործունեության մասին: Նորից հիշենք կաթողիկոսի խոսքը. ստացվում է, որ մինչև 10-րդ դարը մենք հայ չենք ունեցել: Չէ որ այդ եկեղեցիները վերջնականապես բաժանվեցին 10-րդ դարում: Հիշում եմ՝ Լեոյի մոտ հանդիպեցի օսմանյան մի հետաքրքիր փաստաթուղթ՝ գրված 19-րդ դարի սկզբին: Այն ժամանակ թուրքերը շատ էին անհանգստացած հայերի շրջանում կաթողիկոսության տարածմամբ և պայքարում էին դրա դեմ: Լեոն նշում է, որ թուրքական իշխանություններն ավելի շուտ կուզեին, որ մնար Հայ առաքելական եկեղեցին, քան թե տարածվեին կաթողիկոսությունն ու բողոքականությունը: Սակայն այդ եկեղեցիների հետևորդները չդադարեցին հայ լինելուց: Պարզ հարց՝ կաթողիկ լեհերին կաթողիկոսությունն օգնե՞լ է նրանց նույնականության հաստատմանը, թե՞ ոչ:

- Այս դեպքում օրինակ են բերում լեհահայերի գաղութի ճակատագիրը:

- Բայց ո՞ր գաղութը չի ասիմիլացվել: Բյուզանդահայերը չեն ձուլվել: 10-րդ դարում մենք գնում էինք Բյուզանդիա՝ գվարճանալու, ինչպես ոմանք հիմա՝ ասենք Մոսկվա: Ավելի բարձր մշակույթներում ցածրերը միշտ ձուլվում են: Ցածր կուլտուրա ունեցող երկրներում ձևավորված հայկական գաղութի ասիմիլացիոն գործընթացը դանդաղում է: Իսկ ի՞նչ է, այսօր Մոսկվայում կամ Վրաստանում ապրող հայերը չե՞ն ուծացվելու: Նույնիսկ եթե մենք ունենանք իդեալական վրացական իշխանություններ, քանի դեռ Վրաստանում կայունությունն ավելի մեծ կլինի և տնտեսության զարգացումը՝ առավել նկատելի, հայերը, բնականաբար, կուծացվեն:

Այսօրվա հայից ծնված երեխան փորձելու է այդ հասարակության լիարժեք մասնիկը դառնալ: Իսկ լիարժեք մասնիկ դառնալու համար պետք է ընդունել ամբողջ վրացական ատրիբուտիկան: Դուք կարող եք ասել՝ Բեյրութի կամ Թեհրանի հայ գաղութները: Այլ հարց է, երբ հայերն ապրում են այնպիսի միջավայրում, որի մակարդակը հավասարաբար է իրենց կամ ավելի ցածր է: Այնտեղ նրանք ստիպված են անընդհատ պնդել իրենց հայ լինելու հանգամանքը: Իսկ Ամերիկայում ոչ թե պայքարում են իրենց հայ մնալու դեմ, այլ պարզապես ուզում են աշխատել և ապրել ամերիկացիների նման: Հայաստանում եզդիները չե՞ն ուծացվում: Ռուսները չեն ուծացվել, որովհետև Հայաստանում բնակվող ռուսների տնտեսական-կուլտուրական մակարդակն ավելի բարձր էր, քան հայերինը:

- Ձեր վարչապետության օրոք ինչպիսի՞ն էին եկեղեցու դիրքորոշումն ու գործունեությունն առկա ծանր վիճակի հանդեպ:

- Եկեղեցին մեզ օգնել է: Երբ եկեղեցին իր ֆունկցիայի մեջ է, նա միշտ օգնում է: Իսկ երբ դուրս է գալիս, այդ դեպքում է պետությունը սկսում տուժել: Իմ պաշտոնավարման ժամանակ ես առնչվել եմ երկու կաթողիկոսների՝ Վազգեն Առաջինի և Գարեգին Առաջինի հետ: Երկուսն էլ, հատկապես Վազգեն Առաջինը, հասկանում էին պետության դերն ու նշանակությունը: Նրանք չունեին տնտեսական ախորժակներ: Նրանք տեսնում էին իրենց հոգևոր ֆունկցիան: Եկեղեցին պատերազմի ընթացքում մեզ շատ է օգնել:

Օգնությունը ցանկացած տեսակի Եր` կոնտակտներով, ճառերով, ֆինանսապես, ճակատ պարեն ուղարկելով: Վազգեն Առաջինի օգնությունն անգնահատելի էր, և դրա համար էլ Տեր-Պետրոսյանը նրան սովեց ազգային հերոսի կոչում: Ոչ թե նրա համար, որ նա հոգևորական էր, քանի որ լինելով կաթողիկոս` նա դրա կարիքը չունեիր, այլ որովհետև պարտական էինք նրան:

Ընդհանուր առմամբ, հատկապես Վազգեն կաթողիկոսի ժամանակ եղել է լիարժեք ըմբռնում: Մտավորական մարդ էր բառիս բուն իմաստով: Մեր կաթողիկոսների 10-15%-ը եղել են այդպիսի վառ անհատականություններ, բայց դժբախտաբար այս ամենը շատ արագորեն վերացավ, և եկեղեցին վերադարձավ իր սովորական վերարտադրության ճահճի մեջ:

- Վերջին շրջանում բավականին շրջանառվեց բարձրաստիճան եկեղեցականներից մեկի` զենք կրելու փաստը: Ձեր պաշտոնավարության ընթացքում մենք գտնվում էինք պատերազմական վիճակում: Քանի` հոգևորական կար, որ զենք էր կրում:

- Ամենայն պատասխանատվությամբ հայտարարում եմ` ես եղել եմ վարչապետ մի անգամ` երկու ամիս, մյուս անգամ` երեք տարի, ինն ամիս, և ես ոչ մի անգամ եկեղեցականին զենք չեմ նվիրել, թեև ըստ օրենսդրության` վարչապետն անվանական զենք նվիրելու լիազորություն ունի: Խնդրանք էլ չի եղել: Մենք ունեցել ենք բազմաթիվ քահանաներ, որոնք մասնակցել են պատերազմին: Բարձրաստիճան եկեղեցականների դերը միայն հոգևոր էր: Եկեղեցու առաջ, բարեբախտաբար, խնդիր չի էլ դրվել իր ողջ անձնակազմը մոբիլիզացնելու և զենք վերցնելու համար:

- Ձեր պաշտոնավարման վերջին շրջանում` մոտավորապես 1995թ.-ին, ըստ մամուլի տեղեկությունների` բավականին նկատելի կրոնական հալածանքներ են եղել, որոնք ուղեկցվել են նաև որոշակի ֆիզիկական ուժի գործադրմամբ: Ինչ-որ նկատառում ունե`ք այդ շրջանի վերաբերյալ:

- Կառավարությունը միջամտել է դրան, որի պատճառով ներսում բուռն վեճեր են առաջացել: Ես եղել եմ նրանցից մեկը, որոնք դա պարզապես կասեցրել են: Եղել են կառավարության անդամներ, որոնք աջակցել են այդ պրոցեսին, և Էջմիածին էլ դեմ չէր: Այնուամենայնիվ, ես պատասխանատու եմ ամբողջ կառավարության համար, և, այո՛, այդպիսի բան եղել է, դա եղել է մեծ սխալ, անձամբ իմ ռեակցիան եղել է կտրուկ բացասական, և ես դա կանգնեցրել եմ:

- Հիմա ընտրություններ են մոտենում, և ՀԱԿ-ը զբաղված է իր տարբեր ոլորտային ծրագրերի մշակմամբ: Եկեղեցու հետ կապված ինչ-որ դիրքորոշում լինելու` Ե, թե՞ ոչ:

- Մենք դիրքորոշում չենք ունենալու: Մենք կողմ ենք, որ եկեղեցին անկախ լինի: Օրինակ, այսօրվա կառավարությունը հայտարարում է, որ այդ թեզը սխալ է: Մենք չենք

ընդունում այդ տեսակետը: Պետությունն ու եկեղեցին պետք է միմյանց չօգնեն: Խոսքը հոգևոր օժանդակության մասին չէ, երբ, օրինակ, ինչ-որ տարերային խնդրի ես բախվում: Աստված մի արասցե, գուցե բնության արհավիրք է տեղի ունեցել, և եկեղեցին կարող է աղոթքով մեղմել իրավիճակը: Եվ ես գտնում եմ, որ չի կարելի այդ երևույթները խառնել իրար: Գոնե թուրքերից օրինակ վերցնենք. հենց տարանջատեցին պետությունն ու կրոնը, պետությունը բավականին առաջընթաց գրանցեց: Ընդհանրապես ինչո՞ւ վիճել մի բանի մասին, որով աշխարհն արդեն անցել է և դա ակնհայտ է համարում:

- Վերածնակերպեմ հարցը: Ներկա վիճակում՝ եկեղեցի-պետությունն ակտիվ փոխազդեցության պայմաններում արդյո՞ք կարելի է նպատակահարմար համարել այդ ոլորտի կարգավորումն ինչ-որ հայեցակարգի միջոցով:

- Ես չեմ էլ մտածել այդ ուղղությամբ: Միշտ եղել եմ այն համոզման, որ դա պետք է անի կյանքը և ինքը՝ եկեղեցին: Եկեղեցին նույնպես զարգանում է: Եթե նա զարգանում է իր չափի մեջ, իրականացնում է իր հոգևոր գործառույթը և սերմանում է բարություն, ես միայն ուրախ եմ դրա համար: Եկեղեցու բուն գործերին միջամտելն իմ գործը չեմ համարում: Երբ եկեղեցին դառնում է խոշոր սեփականատեր և տնտեսական դերակատար, դա իմ՝ որպես տնտեսագետի գործն է: Եկեղեցին տեղ չունի պետության ներսում: Այս առումով պետությունը կարող է նախանձել եկեղեցուն, որ երբեք այդ ֆունկցիաները չի կարող ունենալ, եկեղեցին էլ պետք է մեկընդմիջտ մտքից հանի, որ ինքն երբևէ պետական գործառույթ է իրականացնելու:

- Հիմա գոյություն ունեն մի շարք օրենսդրական նախաձեռնություններ և նորմեր, որոնք որոշակի առավելություններ և արտոնություններ են ապահովում Հայ առաքելական եկեղեցու համար՝ նաև այս կամ այն պետական ոլորտում ինտեգրվելու առումով: Ինչպիսի՞ դիրքորոշում ունեք արդեն նորմատիվ, և ոչ թե հոգևոր տեսք ստացած այս երևույթի հանդեպ:

- Դիրքորոշումս հիմնականում բացասական է: 2005թ-ի սահմանադրական փոփոխություններին դեմ եմ, որտեղ հիշատակվում է Հայ առաքելական եկեղեցին: Ես չեմ կարողանում հասկանալ դրանից հետո եկած բոլոր փոփոխությունները՝ եկեղեցականներին զենք տալ, հող տալ և այլն: Բացարձակ հիմարություն է այն դատողությունը, որ եկեղեցու ու պետության բաժանումն արդեն արխայիկ է: Դա չիմանալու, չկարողալու արդյունք է: Միանշանակ կարծում եմ, որ Հայ առաքելական եկեղեցին կորոշի իր հետագա անելիքը: Ես կուզենայի տեսնել ընթացք դեպի քրիստոնեական եկեղեցիներ և նրանց հետ մերձեցում: Պետք է աստիճանաբար արմատախիլ լինի «ազգային եկեղեցի» հասկացությունը: Ես դա ասում եմ՝ որպես հավատացյալ: Ես առայժմ մտում եմ Հայ առաքելական եկեղեցու հավատավոր, բայց եթե իրադարձություններն այսպես շարունակվեն, եթե էլի մի քանի հոգի բենթի գնի, ես

Նույնիսկ կառաջարկեմ իմ երեխաներին ընդունել կաթոլիկություն կամ
ուղղափառություն և վերջ: Այդպիսի եկեղեցի մեզ պետք չի:

